

**ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ԶՈՒԳԱՀԵՌԻ ԶԵՎԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

ՊԱՊԻԿՅԱՆ ՍԻԼՎԱ

*Բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտաշխատող
e-mail: papikyansilva@yandex.com*

Բառային փոխառությունը գործընթաց է, որ կատարվում է անհրաժեշտաբար մի լեզվում առաջացած հասկացությունն ու այն նշանակող բառը փոխառելու միջոցով: Այն հետևանք է հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ ազդեցությունների: Փոխառու լեզուն յուրացնում է անհրաժեշտաբար կատարված փոխառությունները, որոնց մի մասը դառնում է նրա բառապաշարի անկապտելի մասը: Ժամանակի ընթացքում փոխառու լեզվում կարող է ստեղծվել փոխառյալ բառի համարժեքը, և օտար բառն ու այդ լեզվում ստեղծված դրա համանշանակը սկսում են գործածվել զուգահեռաբար: Զուգահեռ ձևերի գործածությունը սովորաբար ժամանակավոր բնույթ է կրում, թեև այդ ժամանակը կարող է նաև երկարատև լինել: Հաղթում է տերմինազույգի անդամներից մեկը:

Բանալի բառեր՝ տերմինաբանություն, հասարակական գիտություններ, տերմինային զուգահեռ ձևեր, իմաստային պատճենում, կառուցվածքիմաստային պատճենում, կիսապատճենում, փոխառյալ բառ, տերմինազույգ:

Գիտության, արվեստի յուրաքանչյուր բնագավառ գտնվում է զարգացման իրեն հատուկ փուլում, որն իր ազդեցությունն է թողնում տերմինաբանության վրա:

Տերմինային զուգահեռ ձևերի առաջացման պատճառները տարբեր են. յուրաքանչյուր գիտակարգի տերմինաբանություն ունի իր առանձնահատկությունները՝ պայմանավորված այդ բնագավառի զարգացման ընդհանուր մակարդակով, կանոնարկման գործընթացով և այլն: Փոխառյալ տերմինով և դրա հայերեն համարժեք/ներով կազմված զուգահեռ ձևերի գործածության դեպքում գործում է տերմինի երկակի բնույթը: Այդ կապակցությամբ Գ. Զահուկյանը գրում է, որ «տերմինները, մի կողմից, որպես բառեր, մտնում են լեզվի ընդհանուր համակարգի մեջ, և, հետևաբար,

պայմանավորվում են տվյալ ազգային լեզվի պատմական զարգացման միտումներով ու առանձնահատկություններով. նրանք մյուս կողմից մտնում են տերմինային տվյալ մասնակի համակարգի մեջ և պայմանավորվում են տվյալ բնագավառի հասկացությունների փոխադարձ կապով և տվյալ շրջանում այդ բնագավառի ընդգրկած գիտելիքների շրջանակով: Լեզվի համակարգը, որպես տվյալ ազգի անդամների հաղորդակցման ընդհանուր միջոց, ձգտում է համազգայնության: Տերմինային համակարգը, որպես տվյալ բնագավառի գիտելիքների ու հասկացությունների արտահայտություն, ձգտում է համամարդկայնության»¹:

Անդրադարձել ենք փոխառյալ տերմիններով և դրանց հայերեն համարժեք/ներ/ով կազմված զուգահեռ ձևերին (գրականագիտություն, լեզվաբանություն, տնտեսագիտություն, իրավաբանություն, արվեստի տարբեր ենթաճյուղեր): Հասարակական գիտություններին, բնականաբար նաև այդ համակարգերի տերմինաբանությանը հանրությունը շատ է առնչվում: Այդ բնագավառների տերմիններից շատերը համալրել են համագործածական բառերի շերտը, այն է՝ տերմինային բառեր են:

Հասարակական գիտություններում հանդիպող փոխառությունների և դրանց հայերեն համարժեքներով կազմված զուգահեռ ձևերը բաժանել ենք հետևյալ խմբերի՝

- ա. փոխառյալ բառ և հայերեն համարժեք՝ իմաստային պատճենում,
- բ. փոխառյալ բառ և դրա կառուցվածքաիմաստային պատճենում,
- գ. փոխառյալ բառ և կիսապատճենում:

ա. Որևէ բնագավառի տերմինի՝ լեզու մուտք գործելուց հետո կարող է ստեղծվել նրա հայերեն համարժեքը: Ընդ որում, այդտեղ կարևոր դեր ունեն տվյալ բնագավառի մասնագետները: Տերմինը կարող է «ստեղծվել» մեկ անհատի կամ խմբի կողմից: Ընդհանրապես տերմինները լինում են կողմնորոշող, ապակողմնորոշող և չեզոք: Տերմինի հետագա ճակատագիրը կախված է նրանից, թե որքանով է այն հասկանալի լեզվակիր հանրության: Որքան ավելի կողմնորոշող, կարճ և դյուրահունչ է հայերեն տերմինը, այնքան մեծանում է նրա հաղթանակի հնարավորությունը օտար տերմինի դիմաց: Հնարավոր է նաև օտար բառի հաղթանակը, երբ այն արդեն արմատացել է լեզվում, գործածական է և սովորական լեզվակիր հանրության համար:

Հասարակական գիտություններում հանդիպող փոխառյալ բառ և դրա հայերեն համարժեք/ներ/ով կազմված տերմինազույգերից կարելի է նշել՝

Ալիբի- (իրավք.) այլուրեքություն

Ալիմենտ – (իրավք.) ապրուստավճար

¹ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի տերմինաբանության հարցերի քննարկում, Լրաբեր հասարակական գիտությունների, 1971, թիվ 9, էջ 95:

Անարխիա – (քղք.) անիշխանություն

Անեքսիա – (քղք.) բռնազավթում

Դեպոզիտ – (ֆին.) ավանդ՝ դրամական գումար կամ արժեթղթեր, որ հանձնվում է բանկերին՝ ի պահ:

Դե ֆակտո – (իրավք.) փաստացի

Դիսիդենտ – (քղք.) այլախոհ

Լիզինգ– (տնտգ.) վարձակալություն՝ արտադրական կառույցների, տրանսպորտային միջոցների, սարքավորումների երկարաժամկետ վարձակալություն և այլն:

բ. Հասարակական գիտություններում զուգահեռ ձևեր են կազմվում փոխառյալ տերմինով և դրա կառուցվածքափմաստային պատճենման միջոցով¹:

Կառուցվածքափմաստային պատճենման ժամանակ պահպանվում է ոչ միայն տերմինի իմաստը, այլև կառուցվածքը: Այս դեպքում տերմինի պատճառաբանվածությունը ավելի բացահայտ է երևում:

Բերենք կառուցվածքափմաստային պատճենման օրինակներ հասարակական գիտություններից՝ *ամֆիթատրոն–շուրջտեսանելիք, ավանսցենա–նախաբեմ, դիալոգ–երկխոսություն, տրիլոգիա–եռագրություն, մոնոլոգ–մենախոսություն, հյուրախաղ–գասարդ (գերմ.՝ Gast-հյուր և Rolle-դեր, խաղ), սուբտիլոր–ենթագիր, տրագիկոմեդիա–ողբերգակափայտություն, վիդեոկամերա–տեսախցիկ, վիդեոփլեյեր–տեսախաղարկիչ* և բազմաթիվ այլ տերմիններ:

գ. Կիսապատճենումներ. սրանք բաղադրյալ բառեր են, որոնց մի բաղադրիչը հայերեն է, մյուսը՝ օտար, ինչպես՝ *կինոդիպոդ, կինոժամանակագրություն, կինոհեքիաթ, կոնտեքստ–համատեքստ, մեթոդոլոգիա–մեթոդաբնություն, վիդեոֆիլմ–տեսաֆիլմ* և այլն:

Փոխառություններով և դրանց՝ հայերենում կազմված համարժեքներով կազմված զուգահեռ ձևերը իրենց հերթին դասակարգել ենք՝

1. Փոխառյալ և հայերեն զուգահեռաբար գործածվող տերմիններ, որոնցից հաղթել են հայերեն համարժեքները:

¹ Պատճենումներ հայերենում կան դեռևս 5-րդ դարից: Հատկապես դրանց թիվը մեծ է հունաբան հայերենի շրջանում, ինչպես՝ *այբուբեն, բաղաձայն, ուղղական, սեռական, հայցական. հարանուն, համանուն, քնարական քերթություն, հագներգություն, ողբերգություն, վերձանություն* և բազմաթիվ այլ տերմիններ: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Ա.Մուրադյան, Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Ե.1971:

Ճիշտ է, հունաբան դպրոցի ներկայացուցիչները երբեմն ծայրահեղությունների մեջ են ընկել, սակայն անուրանալի է նրանց դերը հայերենի գիտական տերմինաբանության ստեղծման գործում:

2. Փոխառյալ և հայերեն զուգահեռաբար գործածվող տերմիններ, որոնցից հաղթել են օտար տերմինները:

3. Փոխառյալ և հայերեն զուգահեռաբար գործածվող տերմիններ, որոնք առայժմ հավասարապես գործածելի են:

1. Հասարակական գիտություններում հանդիպող փոխառյալ և հայերեն համարժեքներով կազմված տերմինազույգեր¹, որոնցում հաղթել են հայերեն տերմինները՝ *ապակենկար-վիտրաժ*, *անվանակարգ-նոմինացիա*, *աստվածաբանություն-թեոլոգիա*, *բառախաղ-կալամբուր*, *բռնազավթում-անեքսիա*, *գազաթաժողով-սամիտ*, *գլուձգործոց-շեդեր*, *խորհրդարան-պառլամենտ*, *ծանուցում-անոնս*, *հայրիշխանություն-պատրիարխատ*, *սեղմագիր-ավորոշեֆերատ* և այլն:

2. Փոխառյալ և հայերեն համարժեքներով կազմված տերմինազույգեր, որոնցում հաղթել են օտար տերմինները՝ *աթեիզմ-աստվածամերժություն*, *բանկ-դրամատություն*, *բենեֆիս-պատվախաղ*, *գրանպրի-բարձրագույն մրցանակ*, *գրուտեսկ-արտաոտոց չափազանցություն*, *էքսպրոմտ-հանկարծաստեղծություն*, *իմիջ-կերպար*, *թրիլեր(կինո)-սարսափապատում*² «սարսափազդու տեսարաններով կինոնկար» *կիքս(կինո)-վրիպակ*, *մեքաֆիզիկա-բնագանցություն*, *նոնսենս-անիմաստություն*, *շոու-հանդես*, *պարադոքս-հարակարծություն*, *պաթոս-ոգևորություն*, *պամֆլետ-պարսավագիր*, *պանթեիզմ-համաստվածություն*, *պոլիթեիզմ-բազմաստվածություն*, *սիմֆոնիա-համանվագ*, *քորեյ-մեծասար* և այլն²:

¹ Որոշ տերմիններ հանդես են գալիս տարբեր տերմինահամակարգերում, այսինքն՝ գործունենք արտահամակարգային բազմիմաստության հետ, հմմտ. *Դուբլ* - 1. (կինո) Միևնույն տեսարանի մեկից ավելի նկարահանում: 2. (մարզ.)Կրկնագուլ: *Ասիմիլյացիա* - 1 (լեզվբ.) Առնմանում: 2. (քրք.) Պետական քաղաքականություն՝ մի ժողովրդի ծուկումը մյուսի մեջ: 3. (կենսբ.) Բուսական և կենդանական օրգանիզմների՝ արտաքին միջավայրից ընդունած պարզ տարրերի յուրացումը և փոխակերպումը ավելի բարդ նյութերի: *Գլոսսա* - հուն. glossa 1. (լեզվբ.) Անհասկանալի բառի կամ արտահայտության մեկնություններ լուսանցքում կամ բնագրում մեկնողի կամ ընթերցողի կողմից: 2. (իրավբ.) Օրենքի տողացի մեկնություն: 3. (գրկն.) Հին իսպանական բանաստեղծության տեսակ:

Այդ տերմինների մասին կխոսվի առանձին:

² Փոխառյալ տերմինի դիմաց հայերենում երբեմն նկարագրական բացատրություն է. հմմտ. կասկադյոր՝ «դժվար հնարքներ կատարող անձ», քասթինգ՝ «աշխատակիցների, արտիստների նախնական ընտրություն», օֆշոր՝ «արտոնյալ կամ չհարկվող կարգավիճակով գոտիներում ստեղծված ընկերություն», դեժավյու՝ «վիճակ, երբ մարդուն թվում է, թե ինքը եղել է նման վիճակում» և այլն: Սրանք շատ լեզուներում են ընդունված, նույնիսկ, կարելի է ասել, միջազգային տերմիններ են. հնարավոր է՝ ժամանակի ընթացքում ստեղծվեն նաև դրանց հայերեն համարժեքները:

3. Փոխառյալ և հայերեն զուգահեռաբար գործածվող տերմիններ՝ առայժմ հավասարապես գործածելի՝ *անարխիա-անիշխանություն, անհիզմ-ոգեպաշտություն, ասիմետրիա-անհամաչափություն, ասիստենտ-ընթերակա, բորսա/բիրժա-սակարան, դե ֆակտո- փաստացի, դե յուրե-իրավաբանորեն, էսխատոլոգիա (կրոն.)-վախճանաբանություն, կադարսիս-մաքրագործում, կոմպլեմենտար-համահավասար, կոալիցիա-միություն, դաշինք, կոնսենսուս-համաձայնություն, մեսիջ-ուղերձ, սալդո-հաշվեմանցորդ «դրամական մուտքերի և ծախսերի տարբերությունը որոշակի ժամանակահատվածում», սակրալ-սուրբ, սրբազան, սելֆի-ինքնալուսանկար և այլն:*

Ինչպես ցույց են տալիս մեր հետազոտության արդյունքները, զուգահեռ գործածվող տերմիններից հիմնականում հաղթում են հայերեն համարժեքները, որը մեկ անգամ ևս խոսում է մեր լեզվի տերմինաստեղծման հնարավորությունների և ճկունության մասին: Մայրենի բառաձևի հասկանալիության, համընդհանուր տարածում ստանալու դեպքում, բնականաբար, փոխառյալ տերմինը դուրս է մղվում հայերենից:

Համառոտագրություններ

Գրկն. – գրականագիտական
Թատր. – թատերագիտական
Լեզվբ. – լեզվաբանական
Կրոն. – կրոնական
Իրավբ. – իրավաբանական
Տնտգ. – տնտեսագիտական
Քոլբ. – քաղաքագիտական
Ֆին. – ֆինանսական

Օգտագործված գրականություն

1. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան , Ե. 1976:
2. Բարսեղյան Հ., Հայերեն ուղղագրական ուղղախոսական տերմինաբանական բառարան, Ե., 1973:
3. Հախվերդյան Լ., Թատերագիտական բառարան, Ե., 1986:
4. Հայրապետյան Ա., Օտար բառերի բառարան, Ե., 2011:
5. Պապիկյան Ս., Թատերական և կինեմատոգրաֆիական տերմինների համառոտ բառարան, Ե., 2015:
6. Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարաբյուլյան Թ. , Լեզվաբանական բառարան, Ե., 1975:

7. Զհանգիրյան Դ., Բանկային տերմինների բացատրական բառարան, Ե., 2003:
8. Զրբաշյան Էդ., Մախչանյան Հ., Գրականագիտական բառարան, Ե., 1972:
9. Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Ե. 2006:
10. Բոլին Փիտեր, Իրավաբանության բացատրական բառարան (անգլերեն-հայերեն-անգլերեն), Ե., «Գիտանք» հրատ., 2005, 336 էջ:
11. Словарь литературоведческих терминов, М., 1974.

PARALLEL TERMS IN THE SOCIAL SCIENCES

PAPIKYAN SILVA

PhD in Philology

Researcher at the Language Institute after H. Acharyan, NAS RA

At each stage of language development, parallel terms emerge for this or that reason. The use of parallel terms is usually temporary. One member of the term pair usually wins. The reasons of emergence of parallel terms are different. We have referred to parallel terms formed of borrowed terms and their Armenian equivalents /literary criticism, linguistics, economics, law and different branches of art/. In the social sciences, borrowings and their Armenian parallel terms are divided into the following groups: a) loan word and the Armenian equivalent - semantic copying, b) loan word and its structural-semantic copying, c) loan word and half copying. In the parallel use of both borrowed and Armenian terms, the preference is often given to the Armenian equivalents, sometimes to foreign terms and sometimes they both are used in parallel.

Key words: *terminology, social sciences, parallel terms, semantic copying, structural-semantic copying, half copying, loan word, term pair.*

ПАРАЛЛЕЛЬНЫЕ ТЕРМИНЫ В ОБЩЕСТВЕННЫХ НАУКАХ

ПАПИКЯН СИЛЬВА

кандидат филологических наук

научный сотрудник Института языка имени Р. Ачаряна НАН РА

На каждом этапе развития языка по той или иной причине возникают параллельные формы. Использование параллельных терминов обычно носит временный характер. Из пары терминов побеждает один. Причины возникновения параллельных терминов различны. Рассмотрены параллельные термины,

составленные из заимствованных терминов и их армянских эквивалентов /литературоведение, лингвистика, экономика, право, различные отрасли искусства/. Встречающиеся в общественных науках заимствования и соответствующие им параллельные формы на армянском подразделяются на следующие группы: а) заимствованное слово и армянский эквивалент - семантическое калькирование, б) заимствованное слово и его структурно-семантическое калькирование, в) заимствованное слово и полукалькирование. Среди заимствованных и параллельно используемых армянских терминов часто побеждают армянские эквиваленты, иногда побеждают иностранные термины, а иногда они используются параллельно.

Ключевые слова: терминология, общественные науки, параллельные термины, семантическое калькирование, структурно-семантическое калькирование, полукалькирование, заимствованное слово, пара терминов.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 28. 08. 2019թ.:
Հոդվածը գրախոսվել է 04. 10. 2019թ.: